ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԸ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 6 հուլիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԶԵՑ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանը 15.06.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես, վերջինիս 18-րդ եւ 19-րդ հոդվածների պահանջներին:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ դիմողի կողմից պահպանվել է ՀՀ սահմանադրական դատարան դիմելու օրենքով սահմանված ընդունելիության պայմանները, իսկ սույն դիմումն ըստ ձեւի համապատասխանում է օրենքով նախատեսված ընդհանուր պահանջներին, ուստի առկա չեն գործի քննությունը մերժելու օրենքով ամրագրված հիմքերը:

«Պետական փուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածին համապատասխան՝ դիմողը միջնորդություն է ներկայացրել քննության առարկա գործով պետական փուրքի վճարումից իրեն ազատելու մասին՝ վկայակոչելով իր գույքային դրությունը (կենսաթոշակառու լինելու եւ չաշխատելու հանգամանքը):

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով, 31-րդ, 69-րդ, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. Քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանի անհատական դիմումով գործն ընդունել քննության:
2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:
3. Քաղաքացի Ալբերտ Իսկանդարյանին ազատել ՀՀ սահմանադրական դատարան դիմելու համար օրենքով սահմանված պետական փուրքի վճարումից:

Նախագահող՝

Անդամներ՝

6 հուլիսի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-23